ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ար.մեդտեխնիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	մակնիշը	տեխնիկական բնութագիրը
11	Tellyes	Guardian Pro, TYE9019	Սիրտ-թոքային վերակենդանացման, գնահատման և ամփոփման վարժասարք(մանեկեն) Նախատեսված է սիրտ-թոքային վերակենդանացման, գնահատման և ամփոփման համար՝ տեսողականորեն ցուցադրելով սրտից դեպի ուղեղ արյան հոսքը գործողության ընթացքում: Առնվազն հետևյալ հմտությունների ձեռքբերում՝ · Ծանոթություն անատոմիային · Սիրտ-թոքային վերակենդանացման (ՍԹՎ) նպատակի և սկզբունքների հեշտ ըմբռնում, ինչպես նաև ուսուցման բարելավում՝ իրական ժամանակի հետադարձ կապի շնորհիվ: Հատկանիշներ՝ Իրատեսական տղամարդու ամբողջական մարմնի անատոմիական կառուցվածքներ, ներառյալ ավտոմատ երկկողմանի քնային զարկերակի (carotid) պուլսացիա, սպոնտան (ինքնաբերական) շնչառություն, բբի ռեակցիա: Մանեկեն՝ 1) Պետք է ունենա սիմուլացված արյան շրջանառության ցուցիչ լույսերով և օդափոխության հրահանգներով՝ դինամիկ հետադարձ կապով: 2) Իրատեսական և ճշգրիտ անատոմիական կողմնորոշիչներ՝ սեղմման դիրքը որոշելու համար: 3) Իրատեսական մաշկի

				զգացողություն և հպում: 4) Անլար դիզայն: 5) Պետք է հնարավոր լինի իրականացնել առնվազն 1 000 000 սեղմում: 6) Ներկառուցված լիցքավորվող մարտկոց ոչ պակաս, քան 4 ժամ անընդմեջ աշխատանքի ժամանակով՝ լրիվ լիցքավորված ժամանակ: Ծրագրային ապահովում՝ 1) QR կոդ, որը թույլ է տալիս արագ մուտք գործել կառավարման համակարգ, առանց տեղադրման անհրաժեշտության: Պետք է հնարավոր լինի սկանավորել և օգտագործել ցանկացած տերմինալով, ինչպիսիք են բջջային հեռախոսը, պլանշետը, համակարգիչը և այլն, համատեղելի է IOS, Android, Windows, MacOS, Linux և այլ հիմնական օպերացիոն համակարգերի հետ: 2) Սրտանոթային վերակենդանացում՝ ա) Պետք է համապատասխանի Սրտանոթային վերակենդանացման(CPR) և Արտակարգ սրտանոթային օգնության (ECC) 2020 թվականի AHA ուղեցույցներին: բ) Առավելագույն սեղմման խորությունը կարող է լինել ավելի քան 6.5 սմ (ճիշտ սեղմման խորությունը՝ 5-6 սմ), պետք է ապահովի գերխորը սեղմման հնարավորություն: գ) Երբ ՍԹՎ-ն ճիշտ է կատարվում, գլխի և կրծքավանդակի բոլոր լույսերը լիովին լուսավորվում են, բայց եթե սեղմման խորությունը բավարար չէ (<5 սմ AHA 2015-ի), ապա լույսերի միայն մի մասն է վառվում: դ) ՍԹՎ գործողության տվյալները կարող են ճշգրիտ հայտնաբերվել և ցուցադրվել իրական ժամանակում: Երբ կատարվում է կրծքավանդակի սեղմում, ԷՍԳ ալիքի ձևը ցուցադրվում է և պետք է առկա լինեն ձայնային հուշումներ սեղմման խորության և հաճախականության վերաբերյալ: Եթե ՍԹՎ-ն ստացվում է, մանեկենը պետք է վերականգնի սինուսային ռիթմը, կարոտիդի պուլսացիան և ինքնաբուխ շնչառությունը: Լայնացած բիբերը պետք է վերադառնան նորմալ վիճակի: ե) Պետք է լինեն ՍԹՎ տարբեր սցենարներ, այդ թվում՝ խեղդում, սրտի կանգ, վնասվածք, թունավորում, հիպոթերմիա, էլեկտրական շոկ, ալերգիա և այլն: Օգտատերերը կարող են նաև հարմարեցնել սցենարները, ստեղծել տեսանյութեր կամ խմբագրել/փոփոխել առկա սցենարները: Միջամտությունը/դեղերի ընտրությունը հասանելի է յուրաքանչյուր

			սցենարում: զ) Պետք է հնարավոր լինի պահպանել և արտահանել արդյունքները: է) Պետք է հնարավոր լինի ավտոմատ կերպով կարգավորել ժամանակը, որպեսզի միավորների ցանկի ժամանակը համապատասխանի սարքի ժամանակին: Քաշը ոչ ավել, քան 14 կգ: Համալրում՝ Մանեկեն – 1 հատ Լիցքավորիչ – 1 հատ ԱՄԲՈՒ պարկ – 5 հատ Համապատասխան նոթբուք կամ պլանշետ ՝ ծրագրային ապահովման համար – 1 հատ Բազմաֆունկցիոնալ տեղափոխման պայուսակ – 1 հատ Երաշխիքային ժամկետը՝ մատակարարման պահից սկսած առնվազն 12 ամիս: Ապրանքը նոր է և չօգտագործված:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ар.Медтехника ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	марка	технические характеристики
11			